DOI: 10.54503/1829-4324.2023.2-305

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արշակ Հարությունի Վարժապետյան

Հոդվածը ստացվել է՝ 05.09.23, ուղարկվել է գրախոսման՝ 02.11.23, երաշխավորվել է տպագրության՝ 07.12.23

Ներածություն: Սույն հետազոտության հիմքում դրված **խնդիրներն** են բացահայտել Հայաստանում առկա ռազմավարական պլանավորման մակարդակը, դրա առկայության սահմանները ու ազդեցությունը երկրի զարգացման և սուվերենության պահպանման վրա, առկա պլանային փաստաթղթերի գործածության փոխկապակցվածությունը, անջատողականությունն ու սիմբիզող գործելու հակումն ու հնարավորությունը: Ռազմավարական պլանավորման վերաբերյալ ուսումնասիրություններ կատարվել են շատ սակավ գիտական աշխատանքներում նորովի ու նոր մարտահրավերների համատեքստում տարբեր տեսանկյունով խնդրի խորքային ուսումնասիրությունը դարձել է ժամանակի պահանջը:

Գրականության վերլուծություն: Հայաստանում տարբեր ժամանակներում ռազմավարական պլանավորմանը կամ կառավարմանը ուսումնասիրություններ է իրականացրել Յու.Մ.Սուվարյանն իր «Ռազմավարական կառավարում» (Երևան 2015թ.), «Մենեջմենթ»[1] (Երևան 2002թ.) և «Հայկական պետականության կառավարման հիմնախնդիրները» (Երևան 2023թ.) աշխատություններում, Ե.Ա. Հակոբյանը «ՀՀ ռազմավարական պլանավորման ոլորտում առկա օրենսդրական խնդիրների վերլուծությունն ու դրանց լուծման ուղիների բացահայտումը»[2] (Երևան 2022թ.), իսկ արտադրական կազմակերպությունների մասով Գ. Մանուկյանը «Ֆինանսական պլանավորման հիմնախնդիրները արտադրական կազմակերպություններում»[3], Ա. Թավադյանը «ՀՀ տնտեսական զարգացման գերակայությունների գնահատումը և կանխատեսումը» հետազոտությունում[4], ուսումնասիրություններում և այլն: Ուսումնասիրության համատեքստում դիտարկվել է նաև ԱՄՆ ռազմավարական պլանավորման մոտեցումները և պրոֆեսորներ Քրիս Քոլինջի ու Լես Վորրալի պետության ռազմավարությանը վերաբերող տեսակետները:

---

[1] Յու. Մ. Սուվարյան, Մենեջմենթ, «Տնտեսագետ», Երևան 2002թ., http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/menejment.pdf:

[2] Ե.Հակոբյան, «Սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», ՀՀ ԳԱԱ ՏԻ, Երևան 2022թ.https://economics.sci.am/wp-content/uploads/2022/11/Gitazhoghov-2022-tparan-.pdf

[3] Գ. Մանուկյան, Ֆինանսական պլանավորման հիմնախնդիրները արտադրական կազմակերպություններում, Հեղ. Հրատ., Երևան 2015թ., էջ 28-91

[4] Ա. Թավադյան և ուրիշներ, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման գերակայությունների գնահատումը և կանխատեսումը, Երևան 2015թ., «Տնտեսագետ», https://library.anau.am/images/stories/grqer/Amberd/Amberd_26.pdf

Մեթոդաբանություն: Հետազոտության համար տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել ՀՀ կառավարության և ԿԲ հրապարակումները, գործող օրենսդրական ակտերն ու նորմերը, ինտերնետային կայքերը, հայրենական ու արտասահմանյան մասնագիտական գրականություններն ու հոդվածները և այլն:

Վերլուծություն: Երկրի ներսում յուրաքանչյուր մարմին, լինի դա պետական, թե մասնավոր, իր ապագա տնտեսական զարգացման, ֆինանսական հոսքերի կառավարման, պոտենցիալ, հավանական ու առկա ռիսկերին դիմակայելու, դրանք զսպելու համար իրականացնում է ռազմավարական պլանավորում:

Պետության ռազմավարական պլանավորման տեսական և կիրառական մոտեցումների ուսումնասիրության համար անհրաժեշտ է իրականացել կառավարության կողմից պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (այսուհետ՝ ՄԺԾԾ), ՀՀ պետական բյուջեի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամավարկային քաղաքականության ծրագրի, ինչպես նաև երկրի անվտանգային և սուվերենության պահպանման համատեքստում: Նշվածների համակարգված և փոխգործակցությամբ իրականացումը կբերի երկրում կենսամակարդակի բարելավմանը, պետական և անվտանգային համակարգերի արդյունավետության բարձրացմանը, ինչն իր հերթին կհանգեցի իրական հատվածի, ռեգիոնալ և տարածքային համակարգված և համաչափ զարգացմանը, ստեղծելով հնարավոր ներդրումային իրական միջավայր արտասահմանյան ֆոնդերի հաշվին:

Ի՞նչու: ՄԺԾԾ-ն, որը արդեն 2023թ. համար ներկայացվել է որպես «2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2023 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտ»[1] երկու կարևորագույն, չփոխկապակցված բայց և իրար փոխլրացնող տնտեսական, ֆինանսական քաղաքականության ծրագրերն են, որով պլանավորվում և իրականացվում է ամբողջ երկրի տնտեսական կյանքի վիճակը[2]: Դրանք հաստատվում է ՀՀ Բարձրագույն օրենսդիր մարմնի՝ Ազգային ժողովի, կողմից, որը փաստաթղթավորվում է տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի ընդունմամբ: Սակայն հատկանշական է, որ պետության բարձր կենսունակության, զարգացման բարձր մակարդակի ապահովման, հատկապես գործազրկության մակարդակի կրճատման համար այդ ծրագրերը լինելով իրարից անկախ մարմինների պատասխանատվության ներքո, այնուամենայնիվ պետք է գործեն «սիմբիոզ» կերպով՝ տնտեսական շոկերից և պարալիզացումներից երկիրը զերծ պահելու համար:

---

[1] ՀՀ կառավարության կայքէջ, ՀՀ վարչապետի աշխատակազմ, 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2023 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտ, https://www.gov.am/files/docs/4888.pdf

[2] ՀՀ ԿԲ, Դրամավարկային քաղաքակնություն, նպատակ, https://www.cba.am/am/SitePages/mpobjective.aspx, ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականություն, գնաճի հաշվետվություններ, https://www.cba.am/am/SitePages/mppubl.aspx

Ուսումնասիրելով պետության ռազմավարական պլանավորման հայեցակարգը հարկ է ուսումնասիրել և սինթեզել այնպիսի պետական ու տնտեսական ազգային գաղափարախոսություն, ռազմավարություն, նոր պետականահենք ժամանակակից մոդելներ, որոնք և՛ կիրառական են երկրի զարգացմանը, և՛ բնորոշ են երկրի աշխարհագրական դիրքին, և՛ երկրում բնակչության մտավոր զարգացվածության աստիճանին:

Ըստ Բիրմինգհեմի համալսարանի պրոֆեսոր Քրիս Քոլինջի և Քովենթրիի համալսարանի պրոֆեսոր Լես Վորրալի համատեղ «Managing strategy in local government» հետազոտության տեղական կառավարման մարմիններից լինելով բարդ կազմակերպությունների ակնկալվում է կանխատեսել կարիքները, բացահայտել և արձագանքել բարդ սոցիալական, ժողովրդագրական, տնտեսական և բնապահպանական խնդիրներին, արձագանքել հաճախորդների փոփոխվող ակնկալիքներին, արձագանքել քաղաքացիների ցանկություններին և արդյունավետ օգտագործել սակավ ռեսուրսները՝ պահելով ավելի ու ավելի մեծ թվով մարդկանց ուշադրության ներքո[1]: Ըստ Քոլինջի և Վորրալի տեղական կառավարման ռազմավարության ձևավորման համար գոյություն ունեն վեց հիմնական պարամետրեր.

1. սահմանել, թե ինչ է ռազմավարությունը,
2. ինչպես են մշակվում ռազմավարությունները տեղական ինքնակառավարման մարմիններում,
3. ինչ քայլեր են հանդիսանում «ռազմավարական գործընթաց»,
4. ինչպես են տարբեր տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում ռազմավարական կառավարում,
5. արդյոք մասնավոր հատվածի ռազմավարական կառավարման մոդելները համադրելի են պետական հատվածի համար,
6. ինչ իրավասություններ և նոր հասկացողություններ պետք է զարգացնեն տեղական իշխանությունները, եթե ցանկանում են բարձրացնել իրենց «ռազմավարական կարողությունները»[2]:

Կարելի է եզրահանգել, որ ՀՀ-ում առկա չէ մեկ միասնական փաստաթղթով պետական ռազմավարություն, որում սկզբից մինչև վերջ բնութագրված կլինի

---

[1] Worrall L, Collinge C, Bill T, Managing strategy in local government, International Journal of Public Sector Management, Page 1, https://www.researchgate.net/profile/Les-Worrall/publication/233648967_Managing_Strategy_in_Local_Government/links/0a85e53c5802c0c0e5000000/Managing-Strategy-in-Local-Government.pdf?_sg%5B0%5D=started_experiment_milestone&origin=journalDetail&_rtd=e30%3D

[2] Worrall L, Collinge C, Bill T, Managing strategy in local government, International Journal of Public Sector Management, Page 2, https://www.researchgate.net/profile/Les-Worrall/publication/233648967_Managing_Strategy_in_Local_Government/links/0a85e53c5802c0c0e5000000/Managing-Strategy-in-Local-Government.pdf?_sg%5B0%5D=started_experiment_milestone&origin=journalDetail&_rtd=e30%3D

պետության զարգացման, ներկա վիճակի բարելավման և պետության սուվերենության պահպանման գործընթացները: Ասվածն առավել պարզ մեկնաբանելով կարող ենք ասել, որ ՀՀ-ում խիստ կարևոր է ունենալ մեկ միասնական ՀՀ պետական ռազմավարական և պլանավորման փաստաթուղթ, որում ընդգրկված կլինեն հանրային և մասնավոր բոլոր հատվածներում ռազմավարական նշանակության օբյեկտների ներդրման, զարգացման, կատարելագործման, կարգավորման մեխանիզմները, իրենց հիմքում ունենալով ազգային, պետական և տնտեսական տեսլականն ու գաղափարախոսությունը:

Շարունակելով ՀՀ ռազմավարական պլանավորման ներդրման տեսական և կիրառական առանձնահատկությունները, անդրադառնանք նաև վերջինիս որպես ներդրումային կամ ծախսածածկման բաղադրիչի, որով պետությունը պետք է որպես գլխավոր «նշանառու» թիրախավորի երկրի համար հույժ կարևոր այնպիսի նպատակներ, որոնց ֆինանսավորումն օր առաջ կարևոր, ռազմավարական ու օրակարգային են: Այդ իսկ պատճառով պետք է ռազմավարական ոլորտների ֆինանսավորման համար ուսումնասիրել ՄԺԾԾ-ն առաջնահերթության համատեքստում: Հաշվի առնելով, որ մեր երկրի չորս հարևան պետություններից երկուսը դարեր շարունակ Հայաստանի համար թշնամական և զավթողական քաղաքականություն ունեն, ուստի երկրի թիվ մեկ ռազմավարական պլանավորման ժամանակ պետք է որպես գլխավոր թիրախ սահմանել ազգային գաղափարախոսությունը և՛ սոցիալ-տնտեսական, և՛ սուվերենության համատեքստում, որի շուրջ Հայաստանի սոցիալ-տնտեսական միջավայրի կկառուցվի այնպես, որը ի վիճակի կլինի դիմակայելու ցանկացած տնտեսական, քաղաքական ու ռազմական շոկերի, բախումների և հակամարտության՝ ներառյալ երկրի շրջափակման և տնտեսական պատժամիջոցներով (ուղղակի կամ անուղղակի) կաթվածահարելու փորձերին: Այսինքն, յուրաքանչյուր բաղադրիչի ֆինանսավորման չափը, ժամկետը, առաջնահերթությունը (պարտադիր կամ հայեցողական) ընտրել, ուսումնասիրել, նպատակադրել, թիրախավորել և իրականացնել պետության շահի, սուվերենության համատեքստում և մշտապես դիտարկել այն որպես պետության գերակա շահ: Այսպիսով, ուսումնասիրությամբ առաջարկում ենք մոդել, ըստ որի ՄԺԾԾ-ն որպես Պետական բյուջեի պլանավորման փաստաթուղթ իր բաժինները կտարանջատի ոչ թե ըստ պարտադիր կամ հայեցողական, այլ նաև ռազմավարական, գերակա և սիմբիոզ (ռազմավարականը և գերակա շահը միասին) եղանակով և գնահատելու դրա իրատեսական և ոչ իրատեսական լինելու հանգամանքը:

Մասնավորապես.

- Զարգացման միտումները,
- Նպատակները և թիրախները,
- Ծախսային գերակայությունները,
- ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվող ծախսերը,
- Ոչ բյուջետային աղբյուրներից սպասվող եկամուտները

- Տարածքային զարգացմանն առնչվող ծրագրերը/միջոցառումները
- Միջոլորտային (խաչվող) բնույթի առանձին քաղաքականություններին առնչվող ծրագրերը/միջոցառումները
- Արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրերը/միջոցառումները
- ՄԺԾԾ ժամանակահատվածում ֆինանսական պահանջների ամփոփումը
- Վերջինիս հետ կապված ռիսկերը:

Ուսումնասիրելով ՄԺԾԾ բաժինները ուշագրավ է այն, որ տարածքային զարգացմանն առնչվող ծրագրեր/միջոցառումներ մինչև 2025թ.-ն չի նախատեսվում, ինչը խելամիտ չէ, քանի որ պետության զարգացումը անհրաժեշտ է դիտարկել զարգացման համաչափության համատեքստում, որպես ծաիր տալով բևեռացման հետզհետե առաջացնելու է առավել տնտեսական ճեղքի խորացում, մեծանալու է աղքատության, կրթության մակարդակը, հանգեցնելով հասարակության դեգրադացմանը, պետական մտածելակերպի անկման, պետության կայացման անհասկանալի դրսևորումները:

Եզրակացություն: Երկրի զարգացվածության և առաջ մղման կարևորագույն փաստաթղթերից մեկը հենց ռազմավարական պլանավորումն է՝ ընդգրկված պետության բոլոր հատվածների պլանային և կատարողականի հաջորդական ու փոխլրացվող միջոցառումներով: Սույն առաջադրույթում է հոդվածի **նորույթը**:

Օգտագործված գրականության ցանկ

1. Յու. Մ. Սուվարյան, Հայկական պետականության կառավարման հիմնախնդիրները, «ՀՀ ԳԱԱ Գիտություն», Երևան 2023թ., 222 էջ:
2. Յու. Մ. Սուվարյան, Ռազմավարական կառավարում, «ՀՀ ԳԱԱ Գիտություն», Երևան 2015թ., 283 էջ:
3. Յու. Մ. Սուվարյան, Մենեջմենթ, «Տնտեսագետ», Երևան 2002թ., 560 էջ, http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/menejment.pdf:
4. Ե.Հակոբյան, «Սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», ՀՀ ԳԱԱ ՏԻ, Երևան 2022թ., 468 էջ, https://economics.sci.am/wp-content/uploads/2022/11/Gitazhoghov-2022-tparan-.pdf
5. Գ. Մանուկյան, Ֆինանսական պլանավորման հիմնախնդիրները արտադրական կազմակերպություններում, Հեղ. Հրատ., Երևան 2015թ., 276 էջ:
6. Ա. Թավադյան և ուրիշներ, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման գերակայությունների գնահատումը և կանխատեսումը, Երևան 2015թ., Տնտեսագետ հրատ., 116 էջ, https://library.anau.am/images/stories/grqer/Amberd/Amberd_26.pdf:
7. ՀՀ կառավարություն, Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, 216 էջ, https://www.gov.am/files/docs/1322.pdf:

8. ՀՀ կառավարություն պաշտոնական կայքէջ, Ծրագրեր, Միջնաժամկետ ծախսերի ծրագրեր, https://www.gov.am/am/medium-term/:
9. ՀՀ կառավարության կայքէջ, ՀՀ վարչապետի աշխատակազմ, 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2023 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտ, https://www.gov.am/files/docs/4888.pdf:
10. Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, Հայաստանի հանրապետության 2023 թվականի բյուջետային գործընթացը սկսելու մասին, 16 էջ, ուժի մեջ 21.01.20222., https://www.arlis.am/documentView.aspx?docID=159682:
11. Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, ՀՀ Օրենքը ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին, 11 էջ, ուժի մեջ 01.01.2023թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176824:
12. ՀՀ կառավարության կայքէջ, Հայաստանի Հանրապետության ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ, որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին, որոշում թիվ N 2117 Լ, 22.12.2022թ., 1569 էջ, https://www.gov.am/files/docs/5145.pdf:
13. Research and innovation, resources, U.S. Federal Government Agencies: Strategic Plans 2018-2022, https://researchservices.cornell.edu/resources/us-federal-government-agencies-strategic-plans-2018-2022:
14. Worrall L, Collinge C, Bill T, Managing strategy in local government, International Journal of Public Sector Management, Page 2, https://www.researchgate.net/profile/Les-Worrall/publication/233648967_Managing_Strategy_in_Local_Government/links/0a85e53c5802c0c0e5000000/Managing-Strategy-in-Local-Government.pdf?_sg%5B0%5D=started_experiment_milestone&origin=journalDetail&_rtd=e30%3D:
15. Cornel University, Research & Innovation, U.S. Federal Government Agencies: Strategic Plans 2018-2022, https://researchservices.cornell.edu/resources/us-federal-government-agencies-strategic-plans-2018-2022:

References

1. Yow. M. Sowvaryan, Haykakan petakanowt'yan kar'avarman himnaxndirnery', «HH GAA Gitowt'yown», Er&an 2023t'., 222 e'j:
2. Yow. M. Sovaryan, R'azmavarakan kar'avarowm, «HH GAA Gitowt'yown», Er&an 2015t'., 283 e'j:
3. Yow. M. Sowvaryan, Menejment', «Tntesaget», Er&an 2002t'., 560 e'j, http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/menejment.pdf:
4. E. Hakobyan, «Social-tntesakan ardi himnaxndirnery' Hayastani Hanrapetowt'yownowm», HH GAA TI, Er&an 2022t'., 468 e'j, https://economics.sci.am/wp-content/uploads/2022/11/Gitazhoghov-2022-tparan-.pdf:
5. G. Manowkyan, Finansakan planavorman himnaxndirnery' artadrakan kazmakerpowt'yownnerowm, Hegh. Hrat., Er&an 2015t'., 276 e'j:

6. A. T'avadyan & owrishner, Hayastani Hanrapetowt'yan tntesakan zargacman gera-kayowt'yownneri gnahatowmy' & kanxatesowmy', Er&an 2015t'., Tntesaget hart., 116 e'j, https://library.anau.am/images/stories/grqer/Amberd/Amberd_26.pdf:
7. HH kar'avarowt'yown, Hayastani Hanrapetowt'yan 2014-2025t't'. her'ankarayin zargacman r'azmavarakan c'ragir, 216 e'j, https://www.gov.am/files/docs/1322.pdf:
8. HH kar'avarowt'yown pashtonakan kayqe'j, C'ragrer, Mijnajhamket c'axseri c'ragrer, https://www.gov.am/am/medium-term/:
9. HH kar'avarowt'yan kayqe'j, HH varchapeti ashxatakazm, 2023-2025 t'vakanneri mijnajhamket c'axsayin c'ragri & 2023 t'vakani byowjetayin finansavorman hayt, https://www.gov.am/files/docs/4888.pdf:
10. Hayastani iravakan teghekatvakan hamakarg, Hayastani hanrapetowt'yan 2023 t'vakani byowjetayin gorc'y'nt'acy' skselow masin, 16 e'j, owjhi mej 21.01.20222., https://www.arlis.am/documentView.aspx?docID=159682:
11. Hayastani iravakan teghekatvakan hamakarg, HH O'renqy' HH 2023 t'vakani petakan byowjei masin, 11 e'j, owjhi mej 01.01.2023t'., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=176824:
12. HH kar'avarowt'yan kayqe'j, Hayastani Hanrapetowt'yan KAR'AVAROWT'YAN 2021 t'vakani noyemberi 18-i N 1902-L oroshman mej p'op'oxowt'yownner katarelow masin, oroshowm t'iv N 2117 L, 22.12.2022t'., 1569 e'j, https://www.gov.am/files/docs/5145.pdf:
13. Research and innovation, resources, U.S. Federal Government Agencies: Strategic Plans 2018-2022, https://researchservices.cornell.edu/resources/us-federal-government-agencies-strategic-plans-2018-2022:
14. Worrall L, Collinge C, Bill T, Managing strategy in local government, International Journal of Public Sector Management, Page 2, https://www.researchgate.net/profile/Les-Worrall/publication/233648967_Managing_Strategy_in_Local_Government/links/0a85e53c5802c0c0e5000000/Managing-Strategy-in-Local-Government.pdf?_sg%5B0%5D=started_experiment_milestone&origin=journalDetail&_rtd=e30%3D:
15. Cornel University, Research & Innovation, U.S. Federal Government Agencies: Strategic Plans 2018-2022, https://researchservices.cornell.edu/resources/us-federal-government-agencies-strategic-plans-2018-2022:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արշակ Հարությունի Վարժապետյան

Համառոտագիր: Երկրի ներսում յուրաքանչյուր մարմին, լինի դա պետական, թե մասնավոր կառավարման, իր ապագա տնտեսական զարգացման, ֆինանսական հոսքերի կառավարման, պոտենցիալ և հավանական ռիսկերին դիմակայելու, առկա ռիսկերը զսպելու համար իրականացնում է ռազմավարական պլանավորում, ինչն ապագայի տեսլականին հասնելու լավագույն միջոցն է: Հայաստանում ռազմավարական պլանավորման իրականացման որպես հիմնախնդիր ուսումնասիրելու համար կարևոր է միջնաժամկետ ծախսերի ծրագրի, ՀՀ պետական բյուջեի և ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամավարկային քաղաքականության ծրագրի համատեքստում սիմբյոզ հետազոտությունն ու պլանավորումը: Որպես պրակտիկ կիրառական փաստաթուղթ ՀՀ-ում խիստ կարևոր է ունենալ մեկ միասնական ՀՀ պետական ռազմավարական և պլանավորման մշակված փաստաթուղթ, որում ընդգրկված կլինեն հանրային և մասնավոր բոլոր հատվածներում ռազմավարական նշանակության օբյեկտների ներդրման, զարգացման, կատարելագործման ուղիները, կարգավորման մեխանիզմները,որի հիմքում կլինի ազգային, պետական և տնտեսական տեսլական և պետական գաղափարախոսություն:

Հոդվածում շրջագծվել է ռազմավարական պլանավորման դերը, դրա կարևորությունը, երկրի սուվերենության պահպանման ու տնտեսության առաջմղման սահմանները:

Ռազմավարական պլանավորման վերաբերյալ շատ սակավ ուսումնասիրությունները իրականացվել են աշխատանքներում, մինչդեռ նորովի ու նոր մարտահրավերների համատեքստում տարբեր տեսանկյուններով խնդրի խորքային ուսումնասիրությունները դարձել է ժամանակի պահանջը:

Հետազոտությամբ առաջարկված գիտական նորույթը ամբողջությամբ կիրառական է և գործողությունների իրականացման տեսանկյունից հրատապ:

Բանալի բառեր. ռազմավարական պլանավորում, ՄԺԾԾ, կառավարություն, կենտրոնական բանկ, ՀՀ պետական բյուջե, դրամավարկային քաղաքականության ծրագիր, ազգային ժողով, ազգային գաղափարախոսություն, պետականահենք մոդել, ռազմավարական գործընթաց, ռազմավարական կարողություններ, մասնավոր հատված, իրական հատված:

РАЗМЫШЛЕНИЯ О РЕАЛИЗАЦИИ СТРАТЕГИЧЕСКОГО ПЛАНИРОВАНИЯ В АРМЕНИИ

Аршак Арутюнович Варжапетян

Аннотация. Каждый орган внутри страны, будь то государственная или частная администрация, осуществлял стратегическое планирование для управления своим будущим экономическим развитием, управлял финансовыми потоками, сталкивался с потенциальными и вероятными рисками и сдерживал существующие риски, что является лучшим способ достичь видения будущего. Для изучения реализации стратегического планирования в Армении как проблемы важно исследовать и планировать симбиоз в контексте среднесрочного плана расходов, государственного бюджета РА и программы денежно-кредитной политики ЦБА. В качестве документа практического применения в РА очень важно иметь один единый государственный стратегический и плановый документ РА, который будет включать направления инвестирования, развития, совершенствования стратегических объектов во всех государственных и частных секторах, а также механизмы регулирования, которые будут основываться на национальном, государственном и экономическом видении и государственной идеологии.

В статье обозначены пределы стратегического планирования, его значимость, сохранение суверенитета страны и развитие экономики. В работах проведено очень мало исследований по стратегическому планированию, а углубленное изучение проблемы с разных точек зрения в контексте все новых и новых вызовов стало потребностью времени.

Научная новизна, предложенная исследованием, полностью прикладная и актуальна с точки зрения реализации действий.

Ключевые слова: стратегическое планирование, среднесрочные планы расходов, правительство, центральный банк, государственный бюджет РА, программа денежно-кредитной политики, национальное собрание, национальная идеология, модель государственного строительства, стратегический процесс, стратегические возможности, частный сектор, реальный сектор.

REFLECTIONS ON THE IMPLEMENTATION OF STRATEGIC PLANNING IN ARMENIA

Arshak Harutyun Varzhapetyan

Abstract. Each body/organization within the country, be it public or private, implements strategic planning for its future economic development, financial flow management, to face potential risks, to contain existing risks, which is the best way to achieve the vision of the future. In order to study the implementation of strategic planning in Armenia as a problem, it is important to conduct symbiosis research and planning in the context of the medium-term expenditure program, the RA state budget and the monetary policy program of the RA Central Bank. As a practical application document in RA, it is very important to have a single developed RA state strategic and planning document, which will contain the guidelines for the introduction, development, improvement of strategic objects in all public and private spheres, regulation mechanisms, which will be based on national, state and economic vision and ideology.

This research tries to outline the role of strategic planning, its importance, the possibilities of preserving the country's sovereignty and promoting the economy.

Very few studies on strategic planning have been conducted, while in-depth study of the problem from different perspectives in the context of new challenges has become the need of the hour.

The scientific novelty proposed by the research is completely applicable and urgent from the point of view of implementation of actions.

Keywords: strategic planning, MTEF, Government, Central Bank, RA state budget, monetary policy program, National Assembly, national ideology, state-building model, strategic process, strategic capabilities, private sector, real sector.